

ՆԱՄԱԿԸ ՀԱԿԱՔԵՐԹՈՒԱԾԻ ՄԱՍԻՆ

ՅԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

(օրագրային գրառումներ)

Հակաքերթուածը կ'ըսէ ինքզինք. Հկայ բնականաբար մը տեսանելի առաջ կամ ետք: Զի սահմանուիր իբրեւ իր, այսինքն՝ *ֆերթուած* (= ներկայութիւն— է)... Ան պարզապէս չէ:

18.10.1969

Հարցը “*ֆերթուած*”ի կազմալուծում մըն է:

24.10.69

Կարծել որ կարելի է “*ֆերթուած*”ը ժխտելով զայն փանդել, նախնականութեան մը վերադառնալով կարելի է *անցնիլ* *ֆերթուածի* պատմութիւնը, երկու պարագային ալ անտեսել է անոր կարեւորութիւնը, բեռը՝ մեր գլխուն:

27.10.69

Կարծել որ գիտեմք արդէն ի՛նչ է *ֆերթուածը*՝ անոր էութիւնը, միամտութիւն է:

30.10.69

Գրելը խօսելու անկարողութիւն մըն է, տկարութիւն մը՝ վերածուած կարողականութեան:

11.11.69

Անդին. այս գրութիւնները կը փանդեն իրենք զիրենք ամենէն առաջ, կը ջնջեն իրենց ըսելիքն ու ըսածն անգամ: Ոչ մէկ կարելի տարագում, կաղապարում՝ տիպի մը ընդհանուր անունին տակ: Աւերում են,

արում անչցուած նշաններուն: Ամէն ինչ ուղղուած է վերադարձովը ըսածին ինքն իր վրայ:

24.10.69

Հակաքերթուածը կրնայ միայն անաւարտ մնալ...

Հարցում. ի՞նչ կայ շուրջը Հակաքերթուածին:

15.12.69

Հակաքերթուածը քերթուածի ժխտումը չէ եւ իբրեւ այդ՝ մտնող քերթուածին մէջ, այլ բացարձակ ժխտում, անդին գացող քերթուածի որոշադրութիւններէն եւ հակադրութեան հարցադրութենէն:

Հակադրութիւն = բնագանցութիւն:

17.2.1970

Եթէ Հակաքերթուածը չէ քերթուած, ինչո՞ւ հակա-քերթուած: Տեղը ուրկէ կը մեկնի հիմն է քերթուածին: Էի քերթուածին մէջ՝ խորունկին: Հակաքերթուածը նամբորդութիւն մըն է դէպի ո՞ւր: Բացայայտ՝ որ ոչ դէպի քերթուածը:

17.2.70

Մտածել բացարձակ ժխտումը՝ որ ոչ մէկ տիպեքիք շարժումի կամ տրամաբանութեան մէջ կ'իյնայ: Հակաքերթուածը այդ բացարձակ ժխտումն է, որ չի հպատակիր ամբողջացումի մը եղանակաւորումին:

18.2.70

- Կը գբաղիմ քերթուածով այն չափով որ անով տեղի կ'ունենայ համալիրի մը կազմումը:

- Քերթուածով էութեան (être) տեսողութիւն մը կը հիմնուի ու կը տեսէ: Գիտնալ-աւրել:

8.3.70

Սիրելի Մարկ,

Ձեմ յիշեր ի՞նչ առթիւ հարց կու տայիր ինծի, հաւանաբար Հայտը-պերկ, թէ “ի՞նչ է Հակաֆերթուածը”: Ըսել կ’ուզէիր, կ’ենթադրեմ, ինչպէ՞ս այդ գիրքը կ’արձանագրուի նախապէս տպուածներուն բայց իրմէ ետք գրուածներուն հետ: Հարցումդ կը վերաբերէր նուազ Հակաքերթուած կոչուած հատորի մը տեղին, որքան զայն առեւտրող հարցադրութեան: Հարցումներու սարքին կամ կառուցումին, որմէ զուրկ՝ գրելու արարքը կը վերածուի անհեթեթ աշխատանքի, թէեւ բնաւ՝ անկարելի: Հոն՝ ուրկէ գրողը սկսած է գրութիւնը, այն հատումէն՝ որ եղաւ սկիզբ: Կամ նակատագիր: Ճշդե՞մ որ անիկա ո՛չ բացարձակ, ոչ ալ յարաբերական արձակում մըն է միջոցին մէջ, որ գիրքերու աշխարհն է, իր ետին ունենալով — ներյայտօրէն ժխտուած, կրկնագրուած — գրութիւններու ուրիշ դէպ մը: Կ’ակնարկեմ այն մի քանի շարքերուն, մասնակիօրէն տպուած “Ահեկան”ի էջերուն մէջ, ուր ճիգը կար հասնելու իրերու, աշխարհի ներկայութեան, անոնց անընդ-միջարկեալ յայտնութեան. Բերթուածով: Զգտումը՝ ուրեմն, որ էր հասնիլ ֆերթուածի ներկայութեան: Քերթուածը յայտնաբերելու էր աշխարհը, որ կը յայտնաբերէր ֆերթուածը իր կարգին:

Գիտեմ որքա՛ն անտեղի եւ որոշ չափով անհաւանական կրնայ թուիլ վերի տարազումը քանի մը կտոր ոտանաւորի առթիւ, երբ չունիմ ցանկութիւնը զանոնք որեւէ ձեւով համարկելու նոր, աւելի ուշ օրերու յայտնուած կադապարի մէջ: Յետադարձ ակնարկ՝ անցեալի տարադը-նումին, աւերումին ընդմէջէն, որ կը հանէ այսօր ընդունելի, համա-կարգ պատկեր մը: Ոչինչ կար սկիզբէն, իբրեւ տուեալ: Եւ դժուար է երեւակայել, որ ամէն ինչ եկած է փորձառութեամբ (մեր արձակումը աշխարհ ու լեզուին մէջ): Յստակ է սակայն եւ տակաւին այսօր տա-րիներու հեռաւորութենէն նոյնքան դիմացող՝ գիտակցութիւնը, որ բանաստեղծութիւն կոչուածը սովորական կրթամբ մը չէ, գիտելիք, կամ հոգեբանական-ֆնարական-ողբերգական դիտումներու, մշտում-ներու, խռովներու մէկ, թերեւս հիանալի ու հրաշալուր բայց անբան՝ վեհացումը: Գիտակցութիւնը՝ որ ֆերթուածը, ինչ որ կ’ուզէի գրել, հարկին տակն էր աշխարհն ըսելու եւ ինքզինք պատմելու նոյն ատեն: Կրնայի անշուշտ իրերէն մէկն ու միւսը առնել, նկարագրել՝ պարզե-լով դիտողին կեցումածքը անոր դէմ, բայց կրնայի նոյն ատեն — աւելի դրդիչ, մղիչ կը գտնէի — գրել ֆերթուածին պատմութիւնը:

Իմացական շատ բիրտ ու խիտ ու կենսաբեր աշխատանք մըն էր քերթուածի արարքը, սարսափելիօրէն, գուցէ ծիծաղելիօրէն՝ լուրջ ձեռնարկ մը, որ զայն ապրելու, զայն լիովին, ամբողջովին կրելու, ըլլալու եղանակի մը կ'առաջնորդէր զիս: Շատ յաճախ դժուարը այնքան ալ գաղափար մը յղանալը չէ, որքան զայն մարմնաւորելը կոկորդին ու բերնին մէջ, կշռոյթով մը, կորսնցնելը համբու մը վրայ, ուր ինքնանայ ինք:

Մտքիս հնարանութիւնը ընելու ցանկութիւնը չէ որ զիս կը մղէ գրելու քեզի այս բոլորը: Որեւէ գրութիւն այդ հնարանութիւնը կը կրէ իր մէջ, երբ աղբնչուի մէկ այլի: Կ'ուզեմ պարզապէս հարցումիդ առիթով կատարել *ընդ-դարձում* մը, բացայայտել մութ կէտերը որոշ փորձառութեան մը, առանց լիովին լուսարանելու յաւակնութեան: Մարդ շատ քիչ անգամ կրնայ ըլլալ ինքն իր վկան: Այլ հարց՝ որ չեմ կարծեր տէրն ըլլալ ճշմարտութեան մը, որ ուզէի արտագրել, արտաբերել եւ ուրեմն՝ ծածկել: Շատոնց, գիտեմ, որ գրող մը — գրելը սիրող մը — կոյր է, եւ այս կուրութիւնը, հակառակ ամբողջ իր ժխտականութեան, անոր գորութիւնը կը կազմէ:

Քերթուածը իբրեւ խոնուորդ մը եսի, եսականութեան, բնութեան ու երգի, տղմուտ անձնական կամ ազգային տենդերու եւ հմուտ բառասիրութեան, կը նկատէի անտանելի, զգուելի: Ձեմ փոխուած: Մեր մէջ անիկա, իր այդ ձեւին մէջ, ախտանշանն էր տեսակ մը ահարկու անկումի, պարտութեան մը, աննիգ խոտորումի մը, զոր չէի հասկնար լիովին այդ օրերուն, բայց գիտէի զայն հերքել: Մեր ոտանաւորը աշխարհը չէր ապրեր. չէր ապրած: Գաղափարներու պէս մարդիկ կային, որոնք արուեստը մեր շուրջ վերածեր էին պարզ միջոցի, ծառայութեան, անվաւեր բեռնակրութեան մը (այս բառին հետ մտքիս դէմ կու գայ մեր թաղին ու կարծեմ քաղաքին միակ հայ բեռնակիրը, որ ժամը չորսին, ամառ օրեր, գառիվարէն կը ֆալէր տուն, շալակէն կախած իր պարանները երկարող էրգրումէն Հայկաշէն. պատկերը՝ միակ իրականութեան, որ գաղափարի մարդիկը հերքելով կը հերքէին առանց ուզելու, առանց տեղ տալու անոր բառերու տարածքին): Անխուսափելի⁶⁰. ո՛վ գիտէ: Այնքան աղէտներէ ետ: Կարեւորը այն է ենթարկուած էր եղծումի, չեմ ըսեր՝ ամլութեան — որ կը մտածեմ, ի հարկէ: Ինչպէ՞ս կարելի էր ապրիլ, եթէ մեղաւորներու բանակի մը նման, այսպէս, պարոն Արթինի կեռն ի վար կախած, մորթագերծած եզան պէս՝ *պէտք էր* որ մեռնէինք:

Նամակ Հակաֆերթուածի մասին

Կար այդ օրերուն, ունէի, մտատեսութիւնը բոլորովին տարբերին. անոր, որուն հետաւոր շուքն անգամ մեր շուրջի մարդիկը չէին հալածեր, մոռցած ըլլալով գրեթէ ամէն ինչ, իրենց իսկ ժառանգածը ներառեալ: Կար, կ'ըսէի, մտատեսութիւնը, որ ֆերթուածը էր ուրիշ բան: Ի՞նչ էր: Քերթուածի ցանկութիւնը բաղձանքն է շատ աղօտ, երբեմն անորոշ, անբովանդակ բանի մը, եւ գոր դիւրին է հապնեպօրէն նոյնացնել Բանին հետ, ինչ որ մեծատաղանդ ֆերթողները կ'ընեն յանախ, ցանկութեան այլուրութիւնը որոշադրելով նշմարտութեան մը կաղապարին մէջ: Անշուշտ, շատ աւելի վստահօրէն կրնամք ըսել ի՞նչ ֆերթուած մը չէ, քան ի՞նչ է: Բայց գրո՞ղ մը: Անիկա հարկը ունի գրելով գիտնալու, վազելու որսին հտեւէն, անդադար, գգուշութեամբ՝ որ այս վագֆը չվերածուի լաբիրինթոսացումի: Կը մնար գրել, գիտնալու համար: Ինչպէս նօթ մը, *Հակաքերթուածի* լուսանցքին նետուած կ'ըսէ. “Կարծել որ գիտենք արդէն ի՞նչ է ֆերթուածը՝ անոր էութիւնը, միաւտութիւն է”: Եւ միամիտ չէի:

Քերթուածը՝ իբրեւ ցանկութիւն ֆերթուածի, կը մեկնէր պակասէ մը, պարասպէ մը. ինչ որ այն ատեն կը խորհէի *բացակայութիւն* որպէս. եւ կը դիմէր ֆերթուածի եւ էութեան ներկայութեան: Որոշ, կարելի է ըսել, ներքին բայց չխնդրականացուած համաձայնութիւն մը կը կապէր ֆերթուածը էութեան ներկայութեան. իսկ ինչ որ կը գրէի, կը տեղափոխուէր այդ համաձայնութեան եզրերուն միջեւ: Անցնող ու երեւակայուած թոչունին մէջ կը ձգտէի ֆերթուածին, մոռնալով այն պակասը որ կը բնակէր անոր մէջ, որ կը բնակէր իմ մէջ ու շուրջ: Յանախ այդ պակասը կը գրէր ինքզինք, “բացական կաւի պէս բերնիս”, *Այբբենարանի* մուտքին, կորանքին մէջ, մինչ ամբողջ գրութիւնը կը միտէր անոր զանցումին: Կը մոռնայի:

Այս երեւոյթը կ'առընչուի՞ արդեօք այն միւսին հետ, որ պիտի կոչեմ — ուրիշ բառ չգտնելով — տկարութիւնը որեւէ ընդունելի ֆերթուած գրելու: Մեծ ճիգով կրնայի գլուխ հանել նման գրութիւն. բայց սկիզբն ու վերջը կ'անդրադառնայի որ անոր մէջ կար պակաս մը. պակասը կը բնակէր հոն, ի՞նչ ալ ընէի: Ձեռքս անդադար կը բախէր ֆերթուածի անկարելիութեան, որ ուրիշ բան չէ գուցէ, եթէ ոչ անկարողութիւն մը բառերուն տալու մտքին կաղապարը: Եւ հակառակը: Ինչո՞ւ լեզուն, որով կը գրէի, կը թուէր օտար, ուրիշին լեզուն, ո՛չ մայրենի, կարծես ծնած ու խօսած ըլլայի ուրիշի լեզուին մէջ, որ այս մէկը կը դարձնէր երկրորդ ու անհիմն: Երբեմն կ'ուզէի այս տարագրումը, երբեմն կը մերժէի: Տարիներ պէտք պիտի ըլլային հասկնալու համար որ լեզուի օտարութեան նման փորձառութիւն յատուկ չէր

միայն ինծի պէս մէկու մը, որ գիրքերը ունեցած է շատ ուշ եւ մեծ-
ցած է գրեթէ անգրագէտներու շրջապատին մէջ — ուր երկրէն եկած
մարդիկը հազիւ գիտէին իրենց անունը ստորագրել, յանախ ալ իրենց
բժամատը կը կոխէին թուղթին վրայ: Մեր լեզուն պարզապէս իմս
չէր:

Անմիջապէս որ կը ձեռնարկէի որեւէ բան գրելու՝ կը յայտնուէր
դժուարութիւնը. անկարողութիւնս գեղարուեստականօրէն ձեւաւորե-
լու այս պարապը, կարծես նետուած, արձակուած ըլլալի կարողու-
թիւններէս գերիվեր խնդրի մը մէջ, անլուծելի: Բայց նոյն ատեն այս
անկարողութիւնը միակ զսպանակն էր գրելուն. ան զիս կ'առաջնոր-
դէր տեղեր ուր եղած չէի: Որքան չէի կրնար գրել, ա'յնքան կը գրէի:
Այս հակասութիւնը թերեւս միակ ուժն էր, ամուրթեան մը մէջ, որուն
գիտեմ ընդարձակութիւնը, համատարածումը, օրէնքը: Գրելու անկա-
րողութիւնը տեղ մը, շատ որոշ կերպով, կ'առընչուէր լեզուէն օտա-
րութեան, անկէ անդին՝ ախորին ու անապատին: Այբբենարան կոչածս
ուրիշ բան չէր արդէն, եթէ ոչ տարրական լեզուի մը ստեղծման ան-
հրաժեշտութիւնը. փորձը ֆերբուածի մը, որ ըսէր գիտակցութեան
յայտնակերպումը ընդդէմ ախորին, անվերջանալի տարագրութեան եւ
անվերջանալիօրէն յեղյեղուած պատմութիւններուն: Չարիքի սեմին՝
անկէ ծնող գիտակցութիւնը կը փորձէր յօրինել բառեր, գարշապար-
ները մարդուն «դնել ախորի վսեմութեան»:

Այդ էջերուն — եւ անոնց վրիպանքին — այս յիշատակումը կ'ընեմ
հաստատելու համար այն հատումը, որուն մասին խօսեցայ վերը:
Հակաքերթուածը շատ որոշ, իմ կողմէս շատ լաւ գիտցուած, արար-
ւած հատում մը կը կազմէ այն ամբողջէն, որուն կը մնայի կառչած
նախապէս, Փարիզ գալէս առաջ: Ինծի այնպէս կը թուի նաեւ, որ
յետագայ բոլոր աշխատանքներս կու գան անկէ, ըլլա'ն անոնք հիմ-
նաբառեր, ըլլա'ն հիմնափորձեր: Որոշ չափով հատումը իբրեւ սկիզբ
միշտ «ներկայ» է, նոյնիսկ եթէ հարկադրաբար աներեւոյթ ըլլայ:
Ներկայ՝ այսինքն՝ միշտ արդէն արարուած եւ միշտ գալիք, ուշացող:
Իր այսօրուան տարագումով Հակաքերթուածը անկարելի է ինծի հա-
մար, ըսել կ'ուզեմ՝ պիտի չկարենամ զայն գրել այնպէս ինչպէս
գրուած է. այսուհանդերձ՝ անոր դրած հարցադրութիւնը կը շարունա-
կէ զիս մղել աշխատանքի, դրող ուժի մը պէս, պահելով իր այժմեա-
կանութիւնը, միշտ ինծի համար: Եթէ հարցադրութիւնը կը մնայ
նոյնը, հորիզոնը փոխուած է անդարձօրէն, թերեւս անոր համար որ
գրութիւնը եկած է ի լինելութիւն: Գրողը հազիւ թէ խաբկանքը սնու-
ցանէ որ գոյացածը բաւական է ինքնին, թէ հատորը չունի թերիներ:

Նամակ Հակաֆերթուածի մասին

Բայց պահեր կան երբ գրուածը չի կրնար ըլլալ այսպէս քան է: Ուստի՝ բնաւ չեմ՝ ձեռին համար որ ան առաւ, ակոստար:

**

Հակաքերթուածը կանխող գրութիւններուն մէջ կար, ըսի, ֆերթուածին ցանկութիւնը, դիմող էութեան ներկայութեան. կար նաեւ ասոնց չխնդրականացուած համաձայնութիւնը: Անոնց ներդաշնակութիւնը: Ասոր մասին փիչ թէ շատ յստակ մտածում մը ունենալու համար կը բաւէ կարդալ Մեծաբեց, ֆերթուած մը՝ օրինակ “Առընչութիւն”ը, նկատելու համար ֆերթուածին եւ գոյնէն, կերպէն, տեսանելիէն անդին գտնուող էութեան ներկայութեան առընչումը: “Քերթուածով էութեան (être) տեսողութիւն մը կը հիմնուի ու կը տեսէ: Գիտնալ = աւել”, կ’ըսէ նօթը: *Հակաքերթուածին* յատուկ փորձառութիւնը կը կայանայ այդ ներդաշնակութեան կամ համաձայնութեան խախտումին մէջ: Հարցը այսպէս տարագում, այսինքն վերացականօրէն թելադրուած՝ թերեւս ոչինչ ըսէ: Անխուսափելի է: Իսկ եթէ բանալու ըլլաս հաստորին առաջին էջը եւ հասցնես ընթերցումդ վերջին պարբերութեան, կը գտնես վերջաբան տողը. “ձիւն ծով կորուստ”:

Ամբողջ գիրքը կը ծնի այս էջէն, նոյնիսկ այս տողէն ու տեղէն: Ի գուր չէ որ այս գրքով փորձը եղած է ի կատար ածելու ընդլայնումի եղանակ մը, որուն շնորհիւ էջերուն դասաւորումը, գրութեան մեծ միաւորներուն տրամադրումը, տողերուն յաջորդականութիւնը, բառերուն դիրքը, վերջապէս, իրարու հանդէպ՝ կը հպատակին փորձառութեան ներքին օրէնքին: Զայն կը կարգաւորեն, կը լարեն: Իսկ ամբողջութիւնը կը մեկնի մի ու միակ կէտէ մը, ինչպէս, հանգիստօրէն ըսուած, երաժշտական նոյն բջիջէն կը ծնի բարդ համանուագ մը: Ամենէն փոքր կառոյցէն հանել ընդարձակ կառուցում մը, որ հոն կար գորութենապէս, անոր փակագիծերէն դուրս:

Հակաքերթուածին մէջ կայ կորուստի փորձառութիւն մը եւ զայն ստանձնելու կամքը: Երբ ստանձնել կ’ըսեմ, կը խորհիմ այն կիրարկումին որ ոչ միայն դէպք մը կ’ընդունի, կը ներառնէ, կը հանդուրժէ, այլեւ կը փարի անոր, կ’ուզէ զայն ամբողջովին իրականացնել: *Կորուստը կ’ուզէի*: Հոս է շրջումը կամ ըսեմք՝ դէպքը — ինչ որ ըստ իս կը հիմնէ փորձառութիւն մը: Գրութեան մէջ ու գրելու պահուն կը յայտնուէր կորուստը, բայց՝ էութեան ներկայութեան, որ նոյն ատեն կորուստն էր ֆերթուածին: Էութիւնը չէր տար այլեւս ինքզինք գրութեան որ ըլլար ֆերթուած: *Էութիւնը չէր ֆերթուած*: Լիութեան, բեր-

րիութեան, աշխարհի անմիջական հարստութեան, որակներուն փոռմին ընծայումէն անդին, անոր դէմ, անոր մէջ կը գտնէի այն պակասը, որուն հանդիպեր էի ստէպ-ստէպ, եւ ստիպողաբար մոռցեր:

Ո՞ր չափով գրութեան տեղը լոյս կը սփռէ գրութեան ենթահողիւ վրայ: Յիշեմ կլիման: 1968ի Փարիզը: Համալսարանը առիթն էր կամ պարագան ապրելու, մտածելու հեռաւորութիւնը ծննդեան հողէն, այն ամբողջէն որ գոյութիւն մը կը յօրինէ մեր շուրջ ու մէջ, մեզմէ անկախ: Մէկ օրէն միւսը յանկարծ գիտէի *ախորը*: Այն որուն մասին գրեր էի, հաւաքական մտածողութիւն մը ստեղծուած էր այդ տարիներուն, երբ կարելի էր երբեմն զիրար լսել. կ'ականարկեմ "Ահեկան"ի շրջանին: Բարեբախտութիւնը ունեցած եմ լսող ականջի հանդիպելու, անոր, որ կ'արձագանգէ դուրսէն քեզի, քեզ կը կանխէ մերք եւ մերք կը մղէ քեզ լսելու դուն քեզ, այն, որ կը խօսի մէջդ կամ կը լռէ: Ուրիշին ակնաջը, միւսին: Թերեւս ընդհատ կերպով, թերեւս անխուսափելի ձայնագեղծումով: Ախորը այլ էր հիմա: Փորձած եմ գայն գրել նոյն օրերուն սկսուած էջերու մէջ, որոնք շատ յետոյ, բաւական ուշ ձեւաւորուեցան, հասունցան: Սորվեցայ համբերել: *Հակաքերթը* լաւ ձեւով հետ, նոյն ատեն, գրուած են *Սենեակը* եւ *Վայրերը*, որ կ'ուզէի՝ ըլլային տեսակ մը պլոք, եռաբաժին բարձրախափակ մը, *Հակաքերթը* լաւ ըլլալով միւսներուն մուտքը, առաջամասը: Բայց նոյն ու մի փորձը:

Դուն ալ գիտես 68ի Փարիզը եւ հարկ չկայ մանրամասնելու: Արդէն Յարութիւնը անդրադարձած է մասամբ "Երկրորդ հաւասարտում բազմաթիւ անյայտներով"ին մէջ: Զես գիտեր սակայն որ *Հակաքերթը* լաւ ձեւով ծնած է մայիսեան ուսանողական դէպքերուն մէջ: Անոր մէկ շատ վերացականացում կամ վեհացում վերներեւոյթը: Ի՞նչ կրնար ըլլալ յեղափոխութիւնը մէկու մը համար, որ գոց համայնքէն, Արեւելէն, յանկարծ ելած, ինքզինք կը գտնէ, ինքն իրեն կը հանդիպի օտարութեան փառքներէն մէկուն մէջ, երբ այս մէկը խնդրոյ առարկայ կը դարձնէ փառքակրութիւն ու մշակոյթ, օրէնք ու մարմին. ի՞նչ կրնար ըլլալ յեղափոխութիւնը եթէ ոչ շատ ներանձնացում, ինքնացում, մտերմացում շրջում մը այն բոլորին որ կային: Այս շրջումը պատկերացնելու համար յաճախ մտածած եմ մոռթագերծումի մասին, երբ սովորութիւններու ամբողջ կազմածը մեր մարմնին փակչող, կը հանուի մէկէն: Խզում եւ վերակազմում, խլում եւ հա-

Նամակ Հակաֆերբուսածի մասին

տատում: Օր մը ինֆզինդէ չես նանչնար, որովհետեւ ուրիշներ քեզ կը դադրին նանչնալէ: Պէտք էր այլեւս այս մահը ընդունիլ, ետեւ չնայիլ, սորվիլ չկարօտնալ:

Պատմական դէպքերուն յիշատակումը ոչինչ կը բացատրէ ըստ իս: Դէպքերը կան եւ կան անոնց հանդէպ կեցուածքի կարելիութիւններ: Ինչո՞ւ անոնցմէ մին, երբ իր անդրադարձը կը գտնէ գիրերու աշխարհին մէջ, կը ստանայ այն պատկերը որ իրն է: Պատմական դէպքերը կրնան եւ եղան հոգեբանական կլիմաներ, ուր տեղի կ'ունենան այլազան համադրութիւններ, փմիական բազմաթիւ հակազդեցութիւններ: Հակազդեցութիւնները ունին սկզբնատարբեր: Ինչ որ կը գրէի վերը կը յղուի *Հակաքեթրթուածի* նախատարբին: Այնքան կարեւոր՝ որ անհասկնալի կերպով ջնջած է որեւէ ակնարկ պատմութեան, նուազագոյն շեղում, բոլորովին տարուած գինք կրող յորձանքէն:

Պիտի չփորձեմ բացատրել ու պատմել գրութեան գրուելուն պատմութիւնը: Ըսի, ընելի՜մս ընդ-դարձում մըն է, որ ժամանակին մէջ հեռաւորութիւնը կարելի կը դարձնէ, կ'արտօնէ ալ ինծի: Գրելը ըլլա՛յ “գեղարուեստական” երկի մը արտադրութեան միտող, ըլլա՛յ “նշմարտութեան” մը բացայայտումին դիմող, ինծի համար չէ դադրած ըլլալէ մտաւորական գործողութիւն մը, անդադար ինֆզինք ֆննարկող, փորող, ընդարձակող, հարցաֆննող աշխատանք մը, որ կը կանգնի շատ առդին գեղեցիկի մը կամ նշմարտութեան մը այնքան յարգելի բայց, կրկին ինծի համար՝ հեռաւոր ու անմատչելի որոնումներէն: *Մտաւորական* ըսի, գիտնալով հանդերձ բառին փառահեղ արժեքը: Բայց նկատի ունիմ մտքի տֆնաջան կամ հեզ, մտածումի գործողութիւնը, որ նպատակ մը չի հետապնդեր, ըլլալով հիմնապէս ապայծմէ, անէական (անէութեանական, պիտի ըսէի), անգործնական: Իսկ մտածում կոչուածը ըլլալու կերպ մըն է ի վերջոյ, ուր այս մեր չարչարուող, ուրախացող, բանող ու ինֆզինք վատնող մարմինը կը գոյաւորուի: Ապայծմէ՝ որովհետեւ գրքի արտադրութեան նարտարարութեան մէջ՝ նման գործողութիւն տեղ չունի, հազիւ մարդիկ կը յօժարին գայն ընդունիլ, սանկ անկիւն մը: *Կամ* օրինավիճակը, որ գիտես, հասարակավիճակն է բոլոր իօլ, անշահեկա՛ն — անշահաքեր — ձեռնարկներուն: Հարց է անշուշտ թէ ի՞նչ բան մշակոյթ կոչուածը կ'ապրեցնէ:

**

Աւելի անդին երթալէ առաջ, կ'ուզեմ անդրադառնալ ֆերթուածի եւ պատմական դէպքի խնդրին, արտագրելով նօթ մը. «Քերթուածին պատմականութիւնը, անոր պատմական երեւոյթ մը ըլլալէն չի գար, ոչ ալ անոր պատմողական պարունակութենէն, ինչ որ արդէն ինքնին ֆերթուածի պատմութեան մէջ միայն հանգրուան մըն է: Ուրկէ՞ կու գայ ֆերթուածին պատմականութիւնը...»: Եւ կայ պատասխանը. «անոր պատմութիւն մը հիմնող ըլլալէն» (27.10.69): Պատմական դէպքերուն գեղչումը՝ երբ ամբողջ գրութիւնը դարձած է դէպի, ինչ որ նօթը կը կոչէ, «ֆերթուածին պատմութիւնը»:

**

Կորուստի փորձառութիւնը ուրեմն: Մուտքի տողերը գրքին տակաւին ճիշդ կ'ընեն իրերը, բնանկարը բերելու երեւոյթին, յայտնաբերելու զանոնք, մինչ ժխտական շարժում մը կը փարացնէ զանոնք եւ յայտնութիւնը կը վերածուի նշանի: Մուտքին, ֆերթուածը ցանկութիւնն է ֆերթուածին: Շուտով գրութեան ետին պահուող գիտակցութիւնը — անոր ետին, կ'ըսեմ, որովհետեւ ո՛չ մէկ անձնականութիւն կը յայտնուի հոն, եղածը անե՛ս գրութիւն մըն է գրքին մէկ ծայրէն միւսը, ուր կը խորտակուի նաեւ «գիտակցութիւնը» — կը նշմարէ, որ ֆերթուածի դիտումէն կը վրիպի էութիւնը իբրեւ ներկայութիւն: Փանի մը էջ անդին՝ այս վրիպումը կը տարագուի յստակ, ճիշդ որովհետեւ կը կրկնէ ակնբախ անենթակայութիւն մը: Կը յիշեցնեմ այդ փանի մը տողերը.

«բլուրներէն

ձիւներէն ընկղմած

տեղատուող կը փաշուի

կը թողու դէմքը մութին

աւրուած դէմք»

Ինչ որ գրողը փորձած է գետեղել այս բառերուն տակ, գիտեմ, որքա՛ն փխրուն կամ լիովին անլսելի, այն ալ կորուստի շարժումն է, զոր ենթակայութենէ գուրկ կամ գերծ նախադասութիւնը կը յղէ էութեան ընկրկումի, փաշումի շարժումին: Եթէ չկայ նախադասութիւնը բոնող ենթակայ, գոյանուն, ատիկա պարզապէս կու գայ այն ընդարձակ ընկրկումէն, ուր/երբ ներկայութիւնը չի ձգեր անգամ իր անունը

Նամակ Հակաֆերթուածի մասին

մեզի: Կը մնայ միայն մութին դէմքը, մութը իբրեւ դէմք, իր կարգին ջնջուած:

Հոս, քանի որ մէջքերումի վտանգաւոր քայլը առի, կ'ուզեմ ուշադրութեանդ յանձնել երկու նշում:

- նախ՝ ընդլայնումի եղանակն է, ուր ոչինչ ըսուած է, այլ միայն արարուած, պատկերներու շարժումով եւ բառերու փոխադարձ յարաբերութեամբ: Ինչ որ կը պատահի գրուած է ամբողջովին տողի երկայնքին, տառացիօրէն:

- ապա՝ քերականական եւ շարահիւսական պարտադրանքներէն զերծումի փորձ մը: Ինչո՞ւ: Անշուշտ, ո՛չ զերծումի համար: Միշտ ալ գիտցած եմ, որ լեզուին շարահիւսական կանոնները կ'երթան որոշ ուղղութեամբ եւ անսովոր փորձառութիւնները չեն կրնար անպայման կրել: Կը լուսաւորեն ինչ որ գալու է որպէս մութ: Շարահիւսութիւնն ու քերականութիւնը լեզուին տրուած որոշ մեկնաբանութիւն մըն են, որ, Արիստոտելի օրերէն, կ'ենթադրէ էութեան յստակ որոշադրում: Զարմանալի չէ որ գոյացութիւն եւ մակացութիւն արիստոտելեան բնագանցութենէն անցած են *Պէրիարմէնիաս*ին, մեր մէջ Միջնադարուն մտած Դաւիթի մեկնութիւններով:

Իսկ ինչ որ վերի անդէմ նախադասութիւնը կը թելադրէ էութեան քաշումն է, անոր մթագնումը՝ անդի՛ն դէմքի ու երեւոյթի աշխարհէն: Եւ հապնեպ կերպով, անգգուշութեամբ, ատենին այս մթագնումը կը կոչէի բացակայութիւն:

Պիտի նշմարես որ գրութեան “կը քաշուի”ին դիմաց դրի “ընկրկում”, “մթագնում” եւ ի վերջոյ “քաշում” նորարանութիւնը, այսինքն՝ բայի շարժումը փոխադրեցի գոյականի կայունութեան: Ահաւասիկ՝ հայոց լեզուին սահմանները, որ գրութիւնը հարկին տակն է միշտ խախտելու: Նման խախտումներ եւ այլ քերականական խօթութիւններ, լայնօրէն տիրապետուած անշուշտ, չեն կրնար կանոնի վերածուիլ, չեմ ուզեր որ այդ ըլլան: Այլ մնան ընդմիշտ անկանոն, ինչպէս Եպիկուրի “գլինամէն”ը: Անոնց շուրջ մէկէն, անպասելի կերպով, հոծոյժ մը կը յայտնուի, որ չկար նախապէս:

**

Քերթուածի ցանկութեամբ սկսող գրութիւնը այսպէս կը բախէր էութեան ընկրկումին ու մթագնումին: Քերթուածը կը դառնար անկարելի: Ի՞նչ էր քերթուածը ի վերջոյ: Ի՞նչ կրնար ըլլալ օրինավիճակը գրութեան մը, որ կը գրուի նախկին ներդաշնակութենէն անդին, էութեան ներկայութեան ջնջումին մէջ: Ի՞նչ էին բառերը, լեզուն: Խօսողը: Ես: Վերջապէս՝ էութեան ներկայութեան ընկրկումը — բերես միայն *ներկայութեան* ընկրկումը — կ'արձակէր պարապին, պակասին խուժումը եւ ասով՝ ամէն ինչ կը դառնար խնդրական, անապրելի, անտանելի (ինչպէս Նարեկացի գԱստուած կը կոչէ անտանելի...): Պէտք էր ամէն ինչ մտածել կրկին, ծայրէն, ամէն ինչի փորձը ընել անճանապէս. կարդալ, ֆնել, հեռադրել ինքզինք ընկալեալներէն ու լուծումներէն, վասնզի կ'անդրադառնայի որ ամէն ինչ արդէն լուծուած էր իմ գալէս առաջ:

Քերթուածի խնդիրը զիս այս ձեւով կը տանէր շատ հեռունները քերթուածի գրականութենէն: Անշուշտ, կային ու կան խնդրականացումի այլ եղանակներ, գրականներ՝ սրդէն մեծապէս ծանօթ (դարասկիզբի բոլոր դպրոցները, արդիականութիւնը ամբողջ): Սակայն հագիւ թէ որեւէ ձեւով առընչուէին “մեր” աւանդութեան. առընչուած էին անառընչութեամբ, եթէ պահ մը մոռնամք Սփիւռքի ծայրագոյն արեւմտեան թեւին գրողները: Տրուումի ահռելի գոյութիւնը, որ մերն էր, ժխտումի բիրտ կարողականութեամբ, մտածողական, ոչ-նախնական, ոչ-անմիջական կեցուածք մը կը պարտադրէր: Գիտէինք պարապն ու ախտը, արժէք կոչուած բաներուն անկումը, կեցութեան շնականութիւնը, մահուան խղճալի սովորականութիւնն ու անբերութեացումը բեմէն: Պակսողը մտածումն էր: Կացութիւնը չէ փոխուած ներկայիս: Այս բոլորը կրնամ գրել ներկայ ժամանակով:

**

Հի՞մը քերթուածին:

Կարելի էր գայն ֆենարկումի ենթարկել իր պատմութեան մէջ, իր բոլոր որոշադրումներուն, որոնք բանաստեղծութեան պատմութիւնը կը յօրինեն: Ոեւէ ծանրակշիռ (ըսել կ'ուզեմ իր նակատագիրը ստանձնած, էութեան ու իր կարողութեանց հետ նակատող) քերթողի հետ այդ որոշադրումներէն մին կամ միւսը կը հաստատուէր կամ կը վերահաստատուէր: Արտադրուածին մէջ կը մնար բացայայտելի.

Նամակ Հակաֆերթուածի մասին

ուսանելի: Ահա ընթերցումի կալուած մը եւ հորիզոն մը (հարկ կա՞յ շեշտելու որ ըրած ընթերցումներս միշտ ալ կողմնորոշուած են, յառաջագունէ, թե՛ող դէպի հիմքի փնտռտուք):

Կարելի էր նաեւ այս որոշադրումները ֆննարկել կիրարկումին իսկ մէջ, գրելու արարքին: Հրաժարիլ արտայայտչութեան համակարգէն, որ կ'ուզէր գրելէն դուրս ներքին ու արտաքին աշխարհներ, յղոյթներ կամ իմաստներ, եւ ձգել որ գրութիւնը բանի, նշանակէ ինքզինք:

Կրկնակ, բայց խորքին մէջ նոյն կէտին ձգտող ու զուգահեռ աշխատանքներ էին ասոնք, *կազմալուծումի*, ֆերթուածի ու բանաստեղծութեան պատմութեան կազմալուծումի աշխատանք մը, բացայայտելու համար ֆերթուածին հիմը: Ունէ՞ր հիմ մը: Իսկ անհի՞մը: Քերթուածի առիթով մտած էի գայն զանցող հարցադրութեան մը մէջ, զիս գրաւող ու նուաճած, այն՝ որ Պարմենիդ կը կոչէ էութեան լարիւրիւթոս: — Կը հասկնաս ինչո՞ւ *Հակաքերթուածի* մուտքին իբր բնաբան տեղաւորուած է նախասոկրատեան փիլիսոփայի մէկ տողը: Բանաստեղծութեան հարցին մէջ ի յայտ կու գար թերեւս ամենէն նախնական ու նոյն ատեն ամենէն անշրջանցնելի հարցը իմաստասիրութեան: Առանց որ առաջ փաշուէին “փիլիսոփայական բանաստեղծութեան” — անհեթեթ յղացքը գիրքերուն — թափփուկները: Որով հետեւ պէտք էր բանաստեղծութիւնը ֆննել ոչ-իմաստասիրական եղանակով, ոչ-բնագանցական կաղապարներով:

Կազմալուծումի այն աշխատանքն է որ կը կոչուէր *հակաֆերթուած*:

Այս նորաբանութիւնը, կ'ընդունիմ, դուռ կը բանայ ամէն տեսակ երկդիմութեան, թիւրմբոնումի: Անիկա *եկաւ* ինքն իրեն առաջին իսկ էջի աւարտին, կորուստի արձանագրումին հետ: Առանց վարանումի: Կարծես բառը կար արդէն լեզուին մէջ: Եւ կա՛ր ի հարկէ, քանի որ եկա՛ւ: — Անհրաժեշտ էր որ աշխատանքը անուն մը ստանար: Եւ անհրաժեշտութիւնը կը բխէր գրութենէն, ոչ գրողի կամքէն (պատահական խորագիրներուն նակատագիրը յայտնի է): Ինչ որ կը գրուի, նման հիմնաբառի մէջ, թերեւս անդին է գրողի մը կամքէն ու ենթակայութենէն: Թիւրմբոնումի գիտակցութիւնը ունէի, երբ կը գրէի: Արտագրած ճոթս կը թելադրէ: *Հակաքերթուածը* ֆերթուածին հակադրուող անբանաստեղծութիւնն չէ, արձակի պէս բան մը, որ աւանդականօրէն կը նկատուի հակադիր եզր: Ժամանակակից ֆերթողուի մը կ'ընդվզէր, օր մը, ըսելով որ “բանաստեղծութեան դէմ կարելի չէ ըլլալ”: Զեմ զարմանար որ ֆերթողուին ըմբռնած չըլլար

հարցը, որ էապէս ոչ-ֆերթողական հարց մըն է: Ան կը պարագրէ ֆերթողութիւնը ամէն կողմէն, կը շրջապատէ գայն, մինչ ֆերթողները բաւական... կեդրոնի ու եսի մարդիկ են, ամենէն անշրջահայեացները...:

Թիւրքմբոնումին աղբիւրը *հակաֆերթուածին հակա*-ն էր, զոր մարդիկ կը կարդան միայն իր հակադրական առումին մէջ, իսկ հակադրութիւնը կ'ըմբռնեն հաստատումի մը որպէս հերքում: Թէ *Հակաքերթուածին* մէջ կայ հերքումի աշխատանք մը, անվիճելի է. հարկ է գիտնալ թէ ի՞նչ կը հասկցուի իսկապէս ֆերթուածի հերքումով: Քերթուածին ոչնչացումը: *Հակա*-ն ֆերթուածին տուեալ որոշադրումներուն ֆնոութիւնը կ'ենթադրէ, անոնց *ֆանդումը*, աստ-անդումը: Գրքին մէջ, տեղ մը ըսուած է. “ֆերթուած ֆանդուած երեւոյթին մէջ մութին”, ուր երկու հիմնաբառեր դրուած ենք ֆով ֆովի եւ չեն կանչուած միայն... ձայնային չֆնա՛ղ նմանութեամբ: (Նկատած ըլլաւ ես ընթերցումներուդ ընթացքին, որ ստեղծումներու լեզուն յաճախ շատ աւելի ճշգրիտ է ֆան գիտականութենէ տարուած բանագրութիւններու բարբառները. եւ ոչինչ աւելի տհասելի է ֆան գրող մը, որ հարեւանի կեցուածք կը ցուցաբերէ բառերուն հանդէպ. միտքը տեղ մը՝ ձեռքը ուրիշ տեղ մը):

Սակայն որպէսզի երկու եզրեր հակադրուին, ո՛չ միայն հասարակաց սահման մը ունենալու են, այլեւս պէտք է որ *հակին* իրարու վրայ, *հային* իրարու: *Հակաքերթուածը* այս իմաստով կը հակի ֆերթուածին վրայ, կը նայի անոր, ինչպէս վտանգաւոր հանգիստութեամբ մը, ըսեմք, երեւութաբանութիւնը կը մօտենայ երեւոյթին...: Հակումի այս արարքը նախագոյ է հակադրութեան ու հակադրումին. ինչ որ տրամաբանութիւնը կ'անտեսէ եւ աւանդական բնագանցութիւնը պարզապէս կը զանցէ: Թերեւս բնաստեղծութիւնը հասարակաց ոչինչ ունի տրամաբանութեան ու բնագանցութեան հետ, բայց իբրեւ մարդկային բարձրագոյն ստեղծումներէն մին, անոր տրուած որոշադրումները հազիւ թէ խուսափին այդ մտքին միւս արտադրութիւններէն եւ այդ մտքի պեղումներուն պեղո՛ւմը եղող բնագանցութենէն: Քերթուածին պատմութիւնը տեղ մը պատմութիւնն է բնագանցութեան եւ պարզապէս մտածումին:

Ստոյգ է որ *Հակաքերթուածը* անդադար նկատի ունի ֆերթուածը, ոչ իբրեւ պակասող, ցանկալի, կարօտալի գոյութիւն մը, այլ իր մէջ ներառուած, շրջանակուած, գուցէ փակագծուած անանուն գրութիւն մը, որուն տակ կը բանին ֆերթողականը զանցող որոշադրումները: *Հա-*

Նամակ Հակաֆերթուածի մասին

Կաքերթուածը կը հակի ֆերթուածին վրայ զայն ֆերել-ֆերթել-տար-րալուծել-ֆակելու, ոչ զայն վերարտադրելու, կրկնելու համար: Իսկ երբ ֆերթուած կ'ըսեմ, չեմ հասկնար մասնաւորեալ, հեղինակի մը յղելի կտոր մը, գոր ոչ ոք կրնայ արդէն ֆանդել-ոչ նչացնել:

Գրութեանական ներառումի, շրջանակումի շարժումը գրուած է գրփին միջին մասին մէջ, սապէս տարագրուած, ի միջի այլոց.

“ամէն ինչ հոն մղուած

վերադարձովը խօսքին ըսածին ու իր պարապին”:

Գաղտնիք չէ որ համանուն բաժնին եւ հատորի երրորդ “Անդին” բաժնին միջեւ գետնուած “Յաւելուած”ը գրութեան նօթերն են, թեթեւ վերհալումով, առաջին մասին ու գալիքին մեկնաբանութիւնը:

Գիտեմ որ զգուշ ըլլալու է որոշ բաներու հետ: Անոնցմէ մին “մեկ-նաբանութիւն”ն է: Կ'ակնարկեմ շատ խիտ, գրութեան մօտիկ աշխատանք մը, անկէ մեկնող շեղում մը, որ կը վերադառնայ անոր, զայն չի բացատրեր, այլ կը պարզէ այն բոլորը որ կը մնան չպարզուած, ինչպէս ափի ալիքը յաճախ կը ծածկէ բացէն եկող թաւալը: Ո՛չ թէ մտածումը մանրել, մանրամասնել, այլ բացը գտնուողը կայացնել: Պարզել առագաստը, գործածելու համար նորէն ծովային շրջաբերութիւն մը:

Վերադարձը, բայց ի՞նչ է: Գրուած է հետեւեալը, գրփին մէջ.

“այս վերադարձը անդր ա դարձ

ժխտում անհամադիր

ֆերծող հակադիր

այրող շարժում կեդրոնախոյս նետող ֆերականութիւնը աչփին

ասդ անդ որ

կը ֆ անդէ այս բռնկումը ուր կը հալի կը հոծուի լեզուն”:

Հակաֆերթուածը կը հակի ուրեմն ֆերթուածին վրայ, ներքին ծախով, փոխաբերութեամբ: Երբ կը հակի անոր վրայ, ինքզինք կ'արձակէ էութեան ներկայութեան ընկրկումին, մթագնումին: Էութեան լիումին: Սանճարճակ պարապի աշխարհն է որ ներկայութիւնը կը լի մեզի, երբ կը մթագնի ու չի բերեր այլեւս իր լոյսը: Զանց կ'ընեմ գրփին յատուկ

պատկերային մակարդակը: Գրողը այս լուսնը գիտէ հոն ուր կը գրէ, բառերուն ու լեզուին.

“Եւ անոնց լաբիրինթոսին մէջ չկան լիութիւններ այլ միայն լուսիւններ հակադիր”:

Մեկուսացումի փորձառութիւն, հոն ուր հաղորդակցութիւն կը մտածուի, անջատում, բաժանում այն բոլորէն, որ կը հիմնէին ֆերթութեամբ նախապէս եւ որ այլեւս չեն յայտնուիր:

“Քերթուածով էութեան տեսողութիւն մը կը հիմնուի ու կը տեսէ”: Էութիւնը չէ այլեւս իմաստը գրութեան, ոչ ալ իմաստը՝ էութիւնը գրութեան: Քերթուածէն՝ գրութիւն: Որ միս-մինակ է, ինքն իր հետ.

“չկայ բնական տեսանելի առաջ կամ ետ”

որուն յդուին բառերը, իրրեւ իրենց ապաւենին ու փրկութեան, համաձայնութեան միւս եզրին, քէն միշտ ճիգը կայ յօրինելու բնականորէն եւ ճիգը կայ նորէն հետեւելու մթագնումի շարժումին, անոր ձգած նշաններուն: Նկարագրութեան փորձը անդադար կը կրէ իր մէջ լուսնի փորձառութիւնը: Եւ գիտակցութիւնը, որ կը ջնջուի իր կարգին, իրրեւ դէմք ու ես, կեդրոն (“ֆերթութեան կազմալուծումը կը սկսի եմքակայութեան-ֆերթողի մահով, ըսել կ’ուզեմ ջնջումով”, 16.2.1970), նակատագրական բայց անխուսափելի շրջումով մը կ’ընդունի այս լուսնը, իրրեւ ծագումը բառերուն, կ’ընծայուի բառերու լուսիւններուն: Ահաւասիկ ուսումը *անդին*: Գրութիւնը այլեւս փոխաբերութիւնը չէ էութեան ներկայութեան, այլ միայն փոխաբերումը ինքն իրեն:

**

Քերթուածին ու հակաֆերթութեան միջեւ կայ այն անհուն ու մօտիկ յարաբերութիւնը, ընդելուզումը — որ կայ, օրինակ Նարեկացիի մօտ, ընդմէջ բանաստեղծութեան ու ստեղծաբանութեան: Երկրորդը կը բուի առաջինին շրջուած հակադրութիւնը: Մինչդեռ առաջինը կը սեռի երկրորդէն, առանց զայն լիովին սպառելու, գրեթէ շրջապատուած անով:

**

Հասկցար որ *հակաֆերթուածը* բնաւ գրական սեռ մը չէ, չէր ալ կրնար ըլլալ: Անկեղծօրէն կը խորհիմ որ ձեռնարկը չի հպատակիր գրական գապանակներու, համաձայն այն ըմբռնումին, որ կը կարծեմ թէ ունին մարդիկ, երբ կը խօսին գրականութենէ: Չեմ վախնար ըսելու որ *հակաֆերթուածը* ֆերթուածէն դուրս ելլելու փորձ մըն է: “Յաւելուած”ին մէջ ըսուած է արդէն, կը բաւէ կարդալ.

“Ելք
բայց նանաչումով”

Ելք՝ ֆերթուածէն, զայն որոշադրող ստորոգութիւններէն, գիտնալով այս ելքին դժուարութիւնը. օրինակ, որ մեկնակէտը գտնուի վերստին վախճանակէտին: Ելք մը՝ դէպի այլը: Կամ մուտք մը այլ տեղ: Խորքին մէջ, այս ելքը նանաչումով — ամէն ֆայլի ու արարքի տարողութիւնը եւ ուղղութիւնը գիտնալով, չափելով, խորաչափելով — մուտք մըն էր՝ բայց ֆերթուածի հիմերուն մէջ: Նման Սարաֆեանի տարագած հեռացումին, որ մօտեցում է (*Միջերկրական*): Ոչինչ է որ կը լինէմ, ֆանի որ լիումին մէջն ենք: Մուտք էութեան լիումին, որ մեզ կը ձգէ անապատան, ուղեկորոյս, ուշամոռաց, կը յանձնէ մեզ լեզուի ապաստանին: Լիւմը կը լիւր լեզուն: Որոշ չափով բախտ մըն էր այլեւս, բախտը լեզուին. ան է որ կը հիմնէր ասկէ անդին գրելու արարքը, որուն նամբան, ուղեւորումը, պացումը կը կոչեմ “գրութիւն” — եւ որ պիտի գրում կոչէի, շեշտը դնելու համար շարժումին վրայ, եթէ չվախնայի նորէն նորաբանութեան խոտորումէն:

Կ’ընդունէի, կը ստանձնէի, կ’ուզէի լիւմը, որովհետեւ գիտէի՝ անոր կը յենի ինչ որ կը գրուի:

**

Նման բառերով տարագուած՝ ասիկա կրնայ պատրանքը յառաջացնել որ աշխատանքը գերծ էր ամէն վտանգէ: Անգամ մը որ մտածման եղանակ մը կը պարտադրէ ինքզինք մեր մտքին ու գրչին, կը կարծենք, կը յաւակնինք թէ ոչինչ կը սպառնայ մեզի, կը տիրապետենք անոր: Կարծես թէ մէկ օրէն միւսը կարելի ըլլար ֆերթուածէն դուրս ելլել, ինչպէս սենեակէ մը կամ երկրէ մը: Մեր հետ կը տանինք, կու գան, լեզուին հին ու նոր բառերը, անոր պատմութիւնը, մէկ խօսքով՝ այն բոլորը որ մեզ կը կրեն, եւ չի բաւեր համատարած կասկած մը բանե-

ցընել ազատագրուելու համար անոնցմէ: Անհուն, անաւարտ աշխատանք մը: Գրքին մէջ այդ վտանգին գիտութիւնը կայ, գրեթէ ամէն քաջափոխի, տողի, որովհետեւ ամէն տող կը կանգնի միեւնոյն անսահման փորձութիւններու ընդդէմ:

“վտանգ երբ այս կողմը կը դառնայ միւսին կը դառնանք
դարձութիւն ուր կը հատուի լեզուն”

կամ ալ՝

“Եւ պարապին
կը դողայ ձայն մը կազմուող
նշանին միջեւ ու խորութեան անձանօթ
օ ձայն օ վտանգ”....

Լեւոնով կը յայտնուի լուսինը՝ անհրաժեշտ, ոչ միայն լսողութեան ձայնին — այլեւ լեզուի հիմնական փորձառութեան: Կրնանք շատ բաներ սպրիլ, նանչնալ, մտածել, բայց ստոնք բաւարար չեն որ կարենանք լեզու փոխել: Ապացոյց են յեղափոխութիւնները, որոնք հազիւ լեզու մը կը յեղեն երբ կը վերադառնան հին բարբեր, Կեանքի Դեր Լ. Շանքի (*Շղթայուածք*): Չի բաւեր զօրութիւններ շղթայազերծել, երբ չենք գտնուիր զանոնք ղեկավարելու բարձրութեան վրայ եւ չենք կարող կամենալու անոնց մտածումը, որ այդ բարձրութիւնն իսկ է: Հեռու եմ խորհել թէ *հակաբերքուածք* յեղափոխական սարուած մըն է: Խօսքս կը վերաբերի այն հիմնական շրջումին, այն *դարձութիւն*, ուր կը հատուի լեզուն, երբ կը դադրինք լեզու ունենալէ եւ կ'ուզենք անպայման լեզուին այս չփափումը բառնալ՝ ապաստանելով անոր առոնին հմայքներուն մէջ: Դժուար բան է լեզուն կորսնցնելը: Ինծի համար յստակ էին լեզուին հմայքները եւ ասոնց հերքումը նոյնքան պարզկայ. անգիշող, միակտուր: Ասոր սրտաքին արդիւնքն է օրինակ հատորին աղփատութիւնը բառապաշարէն. հազիւ քանի մը հարիւր բառ, ամենէն սովորականներէն: Իսկ պատկեր... երբ շղթայազերծ կը բանէր բառերուն լոյսին, լուսարձակումներուն ընդդէմ պայքարը, պատկերամարտութիւնը:

Պէտք էր ստեղծել լեզուն: Գրեթէ ստեղծել ապաստան մը:

Անշուշտ, նման ստեղծում անկարելի է, երբ չկայ լեզուի փորձառութիւն, ուրկէ ծնէր ըմբռնումը: Ո՛չ ոք մեզի կը հարցնէ թէ ի՞նչ կը մտածենք երբ լեզու կ'ըսենք: Կը կարծենք թէ լեզուի ըմբռնումները լեզուին նման հասարակաց եզրեր են, բոլորին բաժանելի հաւասար-

Նամակ Հակաֆերթուածի մասին

բապէս: Հաւանաբար կարելի՛ է անոնցմէ մին կամ միւսը կամայական որոշումով մը ընդունիլ: Մտածման գործունէութեան քառական գոեհիկ հասկացողութիւն մը, յարգելի: Բայց փորձառութիւնը լեզուի՞ն: Միթէ ամէն խօսող առ չ'ընե՞ր, երբ կը խօսի: Եւ ամէն օր: Կ'արտայայտէ ինքզինք, կը հաղորդակցի: *Լեզուի փորձառութիւնը անոր հատուկին մէջ է:* Տարօրինակ հաստատում թերեւս, բայց միակ ընդունելին: Իսկ լեզուն հոս լիութիւնը չէ, հակադրուող՝ պակասին, այլ այդ պակասը ինք: Լեզուին լուութիւնները հակադիր. հողը՝ որ կը լէ եւ իմաստը որ կը լէ: Ինծի համար հոս ալ կար արմատախլումի, խզումի պահ մը. կարծես լքումէն ետք լեզուն կտակուներ էր, անվերծանելի, մեհենագիր համայնի մման եւ հարկադրանքը կը ներկայանար զայն սորվելու, վերստին: Բռնորը լռեցնել, մթագնել: Լեզուն, ինչպէս որ կար, չէր համապատասխաներ փորձառութեան, պատասխանը չէր անոր, մինչ ամէն ինչ հո՛ն տեղի կ'ունենար: Լքումը լեզուի փորձառութիւն մըն էր:

Այսուհետեւ՝ հոն էր նաեւ, հատումի վտանգին, ուր կը յայտնուէր ան, իբրեւ բացարձակ ժխտողականութիւն մը, որ ոչինչ կրնար փրկել այլեւս աշխարհէն: Կրնաս կարդալ զայն եւ եւ Զ կտորներուն մէջ: Լեզուն եւ հակաֆերթուածը տեղ մը կը նոյնանային, կը հանդիպէին նոյնին, *աններկայացման գորութեան:*

Եւ արդէն մօթ մը կ'ըսէ. “*Հակաքերթուածը* իր միակ իրականութիւնը կը գտնէ լեզուին մէջ”: Հոս “իրականութիւն” բառը, որքան ալ խընդրական ու կասկածելի թուի, չի դադրիր ըսելէ գրութեան ու արարքին նոյնացումը լեզուին հետ, ասոր ժխտողականութեան, որ կը ջնջէ այն բոլոր ներկայութիւնները որ կը կոչէ կամ կը վկայակոչէ, կը ցրուէ այն ամէնը որ կը հաւաքէ: Այս իմաստով — անիմաստով — ան կ'արարէ, կ'ընդարձակէ պարապը իբրեւ “ոգեկան” ոլորտ...: Լեզուն արտաբնական մը լեզուէն:

**

Պիտի չուզէի՝ հետեւցնէիր թէ հատորը լիովին իրագործած է, ըսել կ'ուզեմ աւարտած է, փակած՝ ծրագիրը որ կը մնայ հարցադրութեան բացին: Զեմ խօսիր յաջողութենէ կամ ձախողութենէ, որովհետեւ չեմ կարդար գիրքերը որ կարդացեր եմ գրելու ատեն: Գրաւել ընթերցողին տեղը:

Հակաֆերթուածը գրքի մը անունն է անշուշտ, ուր խնդրոյ առարկայ կը դառնան այն բոլոր տարրերը, որոնք գրելը կը կրեն. մարմին, ենթակայութիւն, խօսք ու բան, լեզու եւ աշխարհ եւ այս բոլորը ըմբռնող անտեսանելի էութիւնը: Բայց ի՞նչ է նման անուն, եթէ գործողութիւն մը չի սեւեռեր, գործողութիւն մը, որ կը շրջէ, նախ՝ կը դարձնէ գործը, ապա՝ գործողը, միասին, նոյն ատեն, փոխն ի փոխ: Այլալուծի պահ մը, երբ այլութիւններ կանչուած, կոչուած ականջը կը լսէ

“ծայրագոյն ճիւղին վրայ բաց պրկուած... կկուն լռութեամբ
սառած սեւ
ծակ”

մինչ

“գիրքերէն կ’ելլէ օրէնքը քառսին”

եւ խօսողը կը դառնայ “անանձ”:

Այնպիսի այլալուծ մը, որ ֆերթուածին վերագարձը կը դարձնէ անկարելի:

Գործողութիւնը չէ աւարտած սակայն: Ան միշտ արարելի, շարունակելի, կատարելի կը մնայ. “Հակաֆերթուածը կրնայ միայն անաւարտ մնալ” կ’ըսէ Նօթ մը: Գրքէն անդին՝ ուրիշ գրքեր: Բայց ներքին ստիպողութեամբ մը, ինքնավստահութեամբ մը կամ խտրութեամբ մը, եթէ կ’ուզես, միշտ նոյն հետամտումը, որ ոչինչ կը պահպանէ: Սենտակը եւ վերջին Վայրերը կը շարունակեն այս փնտռումները, առանց կուրութեան, տեսական խնդրականացումով: Եղածին մէջ չբանտարկուիլ, մնալ նոյն կոչի լսողութեան մէջ սակայն: Գիտեմ սահմանները այս բոլորին. բայց անսահմանութիւնը չի թուիր ինծի համար առաջինութիւն մը: Նարեկացի տեղ մը մարդը կը սահմանէ իբրեւ “սահման բանաւոր”: Մնալ այդ բանին մէջ ու սահմանին, ճանչնալ վայրը ուր ենք, ահաւասիկ ամենէն դժուարը:

“Կը նախընտրեմ մութը ուր կ’ապրիմ, բոլոր ապահովութիւններէն լոյսի: Մութը՝ ուր կը խարխալեմ”:

Գրիգոր ՊԸԼՏԵԱՆ

Գտնվալը, 8-10 ապրիլ 1985